ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 14 » հոկտեմբերի 202 0 թ.

№ 003-ՀՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N598-ԳՔ ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 02/45.1/56643-2019 գրությունը՝ **հ ր ա մ ա յ ում ե մ.**

1.Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2019 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N489-ԳՔ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N598-ԳՔ հրամանով հաստատված՝

1)N107 հավելվածի (ծածկագիր՝ 43-34.4-Մ2-14) 3.3 կետում «ճարտարագետ-էներգագետի» բառերը փոխարինել «արդյունաբերության և քաղաքացիական շինարարության ճարտարագետի» բառերով.

2) N109 հավելվածի (ծածկագիր՝ 43-35.1-Մ2-9) 3.3 կետում «խմբագրի» բառը փոխարինել «բանասիրության բնագավառում» բառերով».

3) N109 հավելվածի (ծածկագիր՝ 43-35.1-Մ2-9) 3.1 և 4.2 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1.Կրթությունը, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Հումանիտար գիտություններ և արվեստ
2	Ոլորտ	Բանասիրական գիտություններ
3	Ենթաոլորտ	Բանասիրություն
4	Մասնագիտություն	Հայոց լեզու և գրականություն

».

«4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունը

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:».

4) N111 հավելվածի (ծածկագիր՝ 43-35.4-Մ3-2) 4.1 և 4.5 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1.Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:».

«4.5.Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:»:

2.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.Սաֆարյան